# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ**

**քննող անձի**

**թիվ ՍՑ-ԷՍ-2018/60**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.05.2018թ. թիվ 03/26-3/9326-18 գրությամբ «Գալոպեր» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00069233) (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.05.2018թ. թիվ ԴՎԱ/1848 գրության հիման վրա, 24.05.2018թ. «Գալոպեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.05.2018թ. թիվ ԴՎԱ/1848 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող ճանաչվեց՝ «Գալոպեր» ՍՊԸ-ն, վերջինս սահմանված կարգով ներկայացրեց ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում (Հավելված 6), առաջին տեղը զբաղեվրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (Հավելված 6.1), նախկինում կատարած նմանատիպ պայմանագրի և դրա կատարումն հավաստող փաստաթղթեր): Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ընթացակարգի հրավերի թիվ 6.1 հավելվածով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չէր համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես՝ ըստ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ Ջրցան մեքենան պետք է լինի «ԿԱՄԱԶ» մակնիշի, մասնակցի կողմից առաջարկվել էր «ՄԱԶ» մեքենա, ըստ հրավերի՝ բաքի տարողությունը 7խ.մ., մասնակցի կողմից առաջարկված բաքի տարողությունը 6.5 խ.մ. էր, առաջարկված տեխնիկական բնութագրում նշված չէր շարժիչի հզորությունը, ըստ հրավերի՝ մեքենայի լռիվ կշիռը չպետք է պակաս լիներ 15000կգ.-ից, այնինչ առաջարկվող մեքենայի լրիվ կշիռը 12500կգ. էր: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և առաջարկեց մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները: Քննարկելով «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների շտկմանն ի

պատասխան ներկայացված գրությունը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել: Հիմք ընդունելով նշվածը գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Գալոպեր» ՍՊԸ-ի հայտը»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

**3. «Գալոպեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Գալոպեր» ՍՊԸ-ն 31.05.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ մեր ընկերությունը չի ընդունում և առարկում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու դեմ, քանզի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով ընթացակարգի հրավերում ընդգրկված պայմանագրի թիվ 1 հավելվածում ջրցան մեքենայի տեխնիկական բնութագիր բաժնում նշված է կոնկրետ մոդել՝ «ԿՈ829Ա1» և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ Օրենք), 13-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: Անհասկանալի է, թե ինչու է ՀՀ պաշտպանության նախարարության հրավերում նշվել կոնկրետ գնման առարկայի մոդել՝ առանց «կամ համարժեք» բառերի հղման: Մեր ընկերությունը՝ հիմք ընդունելով վերոգրյալ իրավական նորմը, ընթացակարգին ներկայացրել է նշված մոդելին համարժեք այլ առաջարկ, ուստի Օրենքի որևէ խախտման մասին խոսք լինել չի կարող: Հենց նույն բաժնում շարժիչի մասով նշված է՝ Շարժիչի մոդելը՝ «Cummins4ISBE-185» կամ համարժեք, ինչը միանշանակ վկայում է այն մասին, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սխալմամբ գնման առարկայի զուտ միայն

մոդելի նշումը՝ ի խախտումն վերոգրյալ իրավական նորմի, չի կարող հիմք հանդիսանալ, որպեսզի մեր ընկերության կողմից դրա համարժեք գնման առարկայի առաջարկի ներկայացումը դիտվի ընթացակարգի պայմանների խախտում: Նույն հավելվածի ներքևի մասում հստակ հղում է կատարվում վերոգրյալ նորմին և նշվում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ցանկացած հղման դեպքում կիրառելի է «կամ համարժեքը» արտահայտությունը: Այսինքն մեր ընկերությունը գործել է հրավերի նշված հղմանը համապատասխան, ուստի անհասկանալի է, թե ինչու հրավերի նշված պայմանին և ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան մասնակցության պարագայում մեր ընկերությունը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ինչ վերաբերվում է գնման առարկայի շարժիչի հզորությանը, ապա հայտնում եմ Ձեզ, որ մրցույթում պահանջված 179 ձ/ու հզորությամբ շարժիչը պետք է աշխատեցնի 15տոննա ընդհանուր քաշ ունեցող տեխնիկա, իսկ մեր ներկայացրած մոդելի դեպքում ընդհանուր քաշը՝ կիրառված նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ, իջեցված է մինչև 12.5տոննա: Այսինքն, մեր ներկայացրած մոդելի 156.4ձ/ու հզորությամբ շարժիչը աշխատեցնում է 12.5տոննա քաշով տեխնիկան նույն արդյունավետությամբ, ինչ որ 179ձ/ու հզորությամբ շարժիչը 15 տոննա քաշով տեխնիկան, ավելին, այդ դեպքում հնարավորություն է ստեղծվում աշխատեցնել տեխնիկան ավելի խնայողաբար՝ տնտեսելով վառելիք, ինչը՝ մեր համոզմամբ, ևս էական պայման է պետական գնումների ոլորտում: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի համաձայն մեր կազմակերպությունը տրամադրել է համարժեք գնման առարկայի մատակարարման հայտ, ուստի ջրի բաքի տարողությունը 0.5 խորանարդ մետրով կարող էր տարբերվել հրավերում նշված տվյալից: Նշված տարբերության պատճառը կայանում է նրանում, որ ՀՀ ՊՆ հայտը լարցնելիս նշել է կոնկրետ մոդելի կոնկրետ տեխնիկական բնութագիր»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչներ Աղվան Դավթյանը և Արտաշես Դոլունցը:

**4. <u>ՍՑ-ԷՍ-2018/60 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2018թ. թիվ 03/26-3/9326-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.05.2018թ. թիվ ԴՎԱ/1848 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 02.03.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4, 07.03.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 և 14.05.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստին թիվ 6 արձանագրությունները, «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից 31.05.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Գալոպեր» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝

- N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:
- N 4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով գնանշման

հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին: Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Հանձնաժողովը 02.03.2018թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Գալոպեր» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշել է՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցին առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 25.04.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Գալոպեր» ՍՊԸ-ն ծանուցվել է:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

«Ջրցան մեքենա՝ Մոդել ԿՈ829Ա1, բաքի տարողությունը 7 խ.մ, աշխատանքնային լայնության տիրույթը աշխատանքի ժամանակ ոչ պակաս 2.5-20մ, հարթաշերեփինը՝ 2.5մ, ջրի ճնշումը ջրելու ժամանակ ոչ պակաս 0.4 ՄՊԱ, շարժման արագությունը սարքավորումների աշխատանքի ժամանակ ոչ պակաս, ջրցան 10-20կմ/ժամ, հարթաշերեփ 20 կմ/ժամ, տրանսպորտային 60կմ/ժամ, Շարժիչի մոդելը Cummins4ISBE-185 կամ համարժեք, մաքսիմալ օգտակար հզորությունը ոչ պակաս 179 (133) Ձ.ՈՒ(կվտ) 2500 պ/րդեպքում, լրիվ կշիռը ոչ պակաս 15000կգ, Չափսերը ոչ պակաս (երկարություն x լայնություն x բարձրություն) 8200x2900x3200 մմ:

Ընկերությունը N 6.1 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը՝ հետևյալ բովանդակությամբ.

«1-ին չափաբաժին՝ անվանումը՝ Ջրցան մեքենա, ծագման երկիրը՝ Բելառուս, տեխնիկական բնութագիր՝ Մոդել ՄԱԶ-490843-591, բաքի տարողությունը 6500դմ3, աշխատանքնային լայնության տիրույթը աշխատանքի ժամանակ 10մ, հարթաշերեփինը՝ 2.8մ/2.4մ., ջրի ճնշումը ջրելու ժամանակ ոչ պակաս 0.4 ՄՊԱ, շարժման արագությունը սարքավորումների աշխատանքի ժամանակ 1.0 ՄՊա, շարժման արագությունը սարքավորումների աշխատանքի ժամանակ, ջրցան 10-15կմ/ժամ, հարթաշերեփ 40 կմ/ժամ, տրանսպորտային 60կմ/ժամ, Շարժիչի մոդելը ՄՄՅ-Դ-245.30Ե3, լրիվ կշիռը 12500կգ, Չափսերը (երկարություն x լայնություն x բարձրություն) 9036x3000x3300 մմ, Երաշխիք 1 տարի:

Հանձնաժողովը 07.03.2018թ. կայացած նիստին թիվ 5 արձանագրության 1.2 կետովով արձանագրել է, որ «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից 1-ին չափաբաժնի մասով ներկայացրած թիվ 1 հավելվածում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- ըստ հրավերի տեխնիկական բնութագրի՝ Ջրցան մեքենան պետք է լինի «Կամազ» մակնիշի, մասնակցի կողմից առաջարկվել էր «Մազ» մեքենա,

- ըստ հրավերի՝ բաքի տարողությունը պետք է լինի 7խ.մ., մասնակցի կողմից առաջարկված բաքի տարողությունը՝ 6.5 խ.մ.

- առաջարկված տեխնիկական բնութագրում նշված չէ շարժիչի հզորությունը (ներկայացված մոդելի հզորությունը ցածր է հրավերով պահանջված չափից),

- ըստ հրավերի՝ մեքենայի լրիվ կշիռը չպետք է պակաս լիներ 15000կգ-ից, այնինչ առաջարկվող մեքենայի լրիվ կշիռը 12500կգ է:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և առաջարկել մինչև նիստի կասեցման ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը:

Պատվիրատուն 07.05.2018թ. դիմել է «Գալոպեր» ՍՊԸ-ին հայտնելով հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով ընթացակարգին Ձեր կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավերապես.

- ըստ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ Ջրցան մեքենան պետք է լինի «Կամազ» մակնիշի, մասնակցի կողմից առաջարկվել էր «Մազ» մեքենա,

- ըստ հրավերի՝ բաքի տարողությունը պետք է լինի 7խ.մ., մասնակցի կողմից առաջարկված բաքի տարողությունը՝ 6.5 խ.մ.,

- առաջարկված տեխնիկական բնութագրում նշված չէ շարժիչի հզորությունը (ներկայացված մոդելի հզորությունը ցածր է հրավերով պահանջված չափից),

- ըստ հրավերի՝ մեքենայի լրիվ կշիռը չպետք է պակաս լիներ 15000կգ-ից, այնինչ առաջարկվող մեքենայի լրիվ կշիռը 12500կգ է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2018թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև հասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը, իսկ պահանջվող փաստաթղթերը ուղարկել r.mardoyan@mil.am էլեկտրոնային հասցեին»:

«Գալոպեր» ՍՊԸ-ն 08.05.2018թ. գրությամբ դիմել է Պատվիրատուին հայտնելով հետևյալը.

««Գալոպեր» ՍՊԸ-ն հանդիսանում է «ՄԱԶ» ընկերության պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում: Այդ իսկ պատճառով, մեր կողմից ներկայացվել է ՄԱԶ-490843-591 ջրցան մեքենան, որը տեխնիկապես թույլատրելի չափերի շեղումով, համապատասխանում է Ձեր կողմից պահանջված տեխնիկական բնութագրին:»:

Հանձնաժողովը 14.05.2018թ. ժամը 15:00-ին կայացած նիստին թիվ 6 արձանագրության 1.2 կետով արձանագրել է հետևյալը. «Քննարկելով «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունների շտկմանն ի պատասխան ներկայացված գրությունը, Հանձնաժողովը արձանագրեց, որ նշված անհամապատասխանությունները մասնակցի կողմից չեն շտկվել:

Հիմք ընդունելով նշված հանգամանքը գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Գալոպեր» ՍՊԸ-ի հայտը:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Հրավերում ընդգրկված պայմանագրի թիվ 1 հավելվածում ջրցան մեքենայի տեխնիկական բնութագրով պահանջվել է կոնկրետ մոդել՝ «ԿՈ829Ա1» առանց «կամ համարժեք» բառերի հղման: «Գալոպեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նշված մոդելին համարժեք այլ առաջարկ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից ներկայացվել է համարժեք գնման առարկա, ուստի որոշակի տեխնիկական հատկանիշներ կարող են տարբերվել հրավերի տեխնիկական բնութագրով պահանջված տեխնիկական հատկանիշներից, այն պատճառով, որ Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագրով պահանջվել է կոնկրետ «ԿԱՄԱԶ» մակնիշի մեքենա:

Բողոքներ քննող անձի այն հարցին, արդյո՞ք բացի «ԿԱՄԱԶ» մակնիշի մեքենաներից գոյություն չունեն այլ մակնիշի մեքենաներ, որոնք կհամատասխանեն Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագրով պահանջված պարամետրերին, Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ ըստ էության անհնար է գտնել նմանատիպ տեխնիկական բնութագրով այլ մեքենա և հավելեց, որ հնարավոր չէ, որ տարբեր արտադրողների տեխնիկական բնութագրերը ամբողջովին համապատասխան լինեն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ (այսուհետ՝ նաև Օրենք)

- 2-րդ հոդվածի՝ 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:
- 3-րդ հոդվածի՝ 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

• 6-րդ հոդվածի՝ 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 13-րդ հոդվածի՝ 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

• 13-րդ հոդվածի՝ 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

• 13-րդ հոդվածի՝ 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի

բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ. Պատվիրատուն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/18 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջել է կոնկրետ Կամազ մեքենայի «ԿՈ829Ա1» մոդելի ջրցան մեքենա:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ թեև «կամ համարժեք» բառերը նշվել է ապրանքի տեխնիկական բնութագրում, այնուամենայնիվ Հանձնաժողովը որպես անհամապատասխանություն արձանագրել է, որ ըստ ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ ջրցան մեքենան պետք է լինի «Կամազ» մակնիշի, սակայն մասնակցի կողմից առաջարկվել է «Մազ» մեքենա, այսինքն, Հանձնաժողովի համար ընդունելի է եղել միայն կոնկրետ Կամազ մեքենայի «ԿՈ829Ա1» մոդելի ջրցան մեքենայի առաջարկը, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ նման մոտեցումը չի ապահովել հնարավոր մասնակիցների համար մրցակցության հավասար պայմաններ, ավելին, հանգեցրել է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Ինչ վերաբերում է արձանագրված այլ անհամապատասխանություններին, մասնավորապես՝ ըստ հրավերի՝ բաքի տարողությունը պետք է լինի 7 խ.մ., մասնակցի կողմից առաջարկված բաքի տարողությունը՝ 6.5 խ.մ., առաջարկված տեխնիկական բնութագրում նշված չէ շարժիչի հզորությունը (ներկայացված մոդելի հզորությունը ցածր է հրավերով պահանջված չափից), ըստ հրավերի՝ մեքենայի լրիվ կշիռը չպետք է պակաս լիներ 15000կգ-ից, առաջարկվող մեքենայի լրիվ կշիռը 12500կգ է, Բողոքներ քննող անձը գտնում է, որ գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրով մեքենայի բաքի տարողությունը կոնկրետ 7 խ.մ, մաքսիմալ օգտակար հզորությունը ոչ պակաս 179 (133) Ձ.ՈՒ(կվտ) 2500 պ/ր դեպքում, լրիվ կշիռը ոչ պակաս 15000կգ, սահմանումը

օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չէ այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գալոպեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.05.2018թ. թիվ 03/26-3/9326-18 գրությամբ «Գալոպեր»ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

**ՀՀ գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ